



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ՏԱՍԸ ԿՈՒՍԱՆԱՑ ՏՕՆԸ **ՄԵՐ ԹԵՄԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՄԷՋ**

Ս. Յարութեան տօնը կանխող Աւագ շաբթուան իւրաքանչիւր օրը կը մարմնաւորէ Աստուածորդւոյն երկրաւոր կեանքի վերջին հանգրուանին ու պատգամներուն տարբեր դրուագները:

Աւագ Երեքշաբթին նուիրուած էր Տասը Կոյսերու առակին: Այս առիթով, մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ տեղի ունեցաւ երեկոյեան յատուկ ժամերգութիւն եւ մեր հոգեւոր հայրերը վեր առին այս առակին խորհուրդը:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան հանդիսապետեց Հովիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ արարողութեան: Ժամերգութեան մասնակցութիւն բերին Կիրակնօրեայ դպրոցի աշակերտներէն 10 պարմանուհիներ, իբրեւ ներկայացուցիչները տասը կոյսերուն:

Այս առիթով իր ուղղած պատգամին մէջ, Առաջնորդ Սրբազանը անդրադաձաւ հինգ իմաստուն ու հինգ անմիտ կոյսերու օրինակին եւ ընդգծեց, որ հաւատացեալ քրիստոնեային պարտականութիւնն է ըլլալ արթուն, որպէսզի Տիրոջ կողմէ ընծայուած պարգեւները աչքաթող չըլլան ու առիթները չկորսուին: Ան աղօթեց, որ Տէրը մեզի իմաստուն կոյսերուն նման իմաստութիւն շնորհէ եւ արժանի ընէ իր շնորհներուն:

COMMEMORATION OF THE PARABLE OF THE TEN MAIDENS

On the evening of Tuesday, March 18th, Holy Tuesday services took place in Prelacy Churches commemorating the Parable of the Ten Maidens. The Prelate conducted services and conveyed his message on this occasion at St. Garabed Church in Hollywood. Sunday School students from the parish participated in the service representing the ten maidens.

The Prelate spoke of the example of the five wise maidens, emphasizing that it is the responsibility of each faithful Christian to be alert as they were so that we don't fail to notice the blessings granted to us by Almighty God. The Prelate concluded by praying for God to grant us all wisdom of the five wise maidens so that we may also become worthy of the Lord's blessings.